

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 98/27/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Սպառողների շահերի պաշտպանության նպատակով իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխող միջոցների մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը և, մասնավորապես, դրա հոդված 100«ա»-ն,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը², գործելով Համաձայնագրի հոդված 189«բ»-ով սահմանված ընթացակարգի համաձայն³,

1) քանի որ, սույն Հրահանգին կից հավելվածում թվարկված որոշ հրահանգներ սահմանում են նորմեր սպառողների շահերի պաշտպանության մասին,

2) քանի որ այդ հրահանգների կատարումն ապահովող՝ ներպետական և Համայնքի մակարդակով ներկայումս գոյություն ունեցող մեխանիզմները միշտ չէ, որ ժամանակին հնարավոր են դարձնում սպառողների կոլեկտիվ շահերը վնասող խախտումների դադարեցումը. քանի որ կոլեկտիվ շահերն այն շահերն են, որոնք չեն ներառում տուժած անձանց շահերի ամբողջությունը, մինչդեռ դա չի սահմանափակում խախտումներից տուժած անհատների կողմից անհատական հայցեր հարուցելու հնարավորությունը,

3) քանի որ կիրառվող ներպետական դրույթների համաձայն անօրինական համարվող գործելակերպը դադարեցնելու նպատակի առումով, վերը նշված հրահանգները փոխատեղող ներպետական միջոցները, ներառյալ՝ այդ հրահանգներով սահմանված մակարդակից դուրս գտնվող պաշտպանության միջոցները կարող են (պայմանով, որ դրանք համատեղելի են Համաձայնագրի հետ և թույլատրվում են այդ հրահանգներով) անարդյունավետ լինել այն դեպքերում, երբ այդ գործողությունների հետևանքները առաջ են գալիս ոչ այն անդամ պետությունում, որտեղ դրանք կատարվել են,

4) քանի որ այդ դժվարությունները կարող են խախտել ներքին շուկայի անխափան

¹ ՊՏ, C 107, 13.04.1996 թ., էջ 3 և ՊՏ, C 80, 13.03.1998 թ., էջ 10:

² ՊՏ, C 30, 30.01.1997 թ., էջ 112:

³ Եվրոպական պառլամենտի 1996 թվականի նոյեմբերի 14-ի եզրակացություն (ՊՏ, C 362, 2.12.1996 թ., էջ 236): Խորհրդի 1997 թվականի հոկտեմբերի 30-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ, C 389, 22.12.1997 թ., էջ 51) և Եվրոպական պառլամենտի 1998 թվականի մարտի 12-ի որոշում (ՊՏ, C 104, 6.04.1998 թ.): Խորհրդի 1998 թվականի ապրիլի 23-ի որոշում

գործունեությունը, և դրանց հետևանքով իրավակիրառական բոլոր տեսակի միջոցառումներից խուսափելու համար բավարար է ընդամենը անօրինական գործողությունների աղբյուրը տեղափոխել մեկ այլ երկիր. քանի որ դա իրենից ներկայացնում է մրցակցության խաթարում,

5) քանի որ այդ դժվարությունները կարող են նվազեցնել սպառողների վստահությունը ներքին շուկայի հանդեպ և կարող են սահմանափակել սպառողների կոլեկտիվ շահերը ներկայացնող կազմակերպությունների կամ սպառողների կոլեկտիվ շահերի պաշտպանության համար պատասխանատու պետական անկախ մարմինների գործողության շրջանակը, որոնց վրա բացասաբար են անդրադառնում Համայնքի իրավունքը խախտող գործողությունները,

6) քանի որ այդ գործողությունները հաճախ դուրս են գալիս անդամ պետությունների սահմաններից. քանի որ հրատապ անհրաժեշտություն կա համապատասխանեցնելու ներպետական նորմերը, որոնք նախատեսված են՝ պարտադրելու վերը նշված անօրինական գործողությունների դադարեցումը՝ անկախ այն երկրից, որտեղ առաջ են եկել նման գործողության հետևանքները. քանի որ, իրավասության առումով, այն չի սահմանափակում միջազգային մասնավոր իրավունքի նորմերի և անդամ պետությունների միջև գործող կոնվենցիաների գործողությունը՝ միաժամանակ հարգելով անդամ պետությունների՝ Համաձայնագրից բխող ընդհանուր պարտավորությունները, մասնավորապես, ներքին շուկայի անխափան գործունեությանն առնչվող պարտավորությունները,

7) քանի որ սահմանված գործողությունների նպատակին կարող է հասնել միայն Համայնքը. քանի որ Համայնքի վրա է դրված գործելու պարտականությունը,

8) քանի որ Համաձայնագրի հոդված 3 «բ»-ի 3-րդ պարբերությունը պարտավորեցնում է Համայնքին՝ գործել միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է Համաձայնագրի նպատակների իրականացման համար. քանի որ այդ հոդվածի համաձայն, ներպետական իրավական համակարգերի որոշակի առանձնահատկություններ պետք է հնարավորինս հաշվի առնվեն՝ հնարավորություն տալով անդամ պետություններին ընտրություն կատարել նույն արդյունքի հանգեցնող տարբեր տարբերակների միջև. քանի որ սույն Հրահանգի 2-րդ հոդվածում նշված գործերով որոշում կայացնելու իրավասություն ունեցող դատարանները կամ վարչական մարմինները պետք է ունենան նախկինում ընդունած որոշումների արդյունքներն ուսումնասիրելու իրավունք,

9) քանի որ տարբերակներից մեկը պետք է լինի մեկ կամ մի քանի անկախ պետական մարմիններից, որոնք, մասնավորապես, զբաղվում են սպառողների կոլեկտիվ շահերի պաշտպանությամբ, սույն Հրահանգով նախատեսված՝ հայց հարուցելու իրավունքների իրականացումը պահանջելը. քանի որ տարբերակներից մյուսը պետք է լինի ներպետական իրավունքով սահմանված չափանիշների համաձայն, այն կազմակերպությունների կողմից այդ իրավունքների իրականացումն ապահովելը, որոնց նպատակը սպառողների կոլեկտիվ շահերի պաշտպանությունն է,

10) քանի որ անդամ պետությունները պետք է կարողանան սույն Հրահանգի նպատակներին հասնելու համար պետական մակարդակով իրավասու մարմիններ և (կամ) կազմակերպություններ ստեղծելիս ընտրություն կատարել այդ երկու

տարբերակների միջև կամ համատեղել դրանք,

11) քանի որ ներհամայնքային խախտումների մասով փոխադարձ ճանաչման սկզբունքը պետք է կիրառվի այդ մարմինների և (կամ) կազմակերպությունների նկատմամբ. քանի որ անդամ պետությունները պետք է ներպետական կառույցների պահանջով Հանձնաժողովին հայտնեն այն ներպետական կառույցների անվանումներն ու նպատակները, որոնք իրավասու են իրենց իսկ երկրում հայց հարուցել՝ սույն Հրահանգի դրույթներին համապատասխան,

12) քանի որ Հանձնաժողովը պարտավոր է ապահովել իրավասու կառույցների ցանկի հրապարակումը *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում*. քանի որ, քանի դեռ հակառակը չի հրապարակվել, իրավասու կառույցները, որոնք ընդգրկված են ցանկում, իրավունակ են համարվում,

13) քանի որ անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան պահանջելու իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխելու վերաբերյալ հայց հարուցող կողմից իրականացնել նախնական խորհրդատվություն՝ պատասխանողին վիճարկվող խախտումը վերացնելու հնարավորություն տալու համար. քանի որ անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան պահանջելու, որ նախնական խորհրդատվությունն անցկացվի անդամ պետությունների կողմից ստեղծված անկախ պետական մարմնի հետ համատեղ,

14) քանի որ, եթե անդամ պետությունները սահմանել են, որ անհրաժեշտ է անցկացնել նախնական խորհրդատվություն, նման խորհրդատվության պահանջն ստանալուց հետո հաստատվում է երկշաբաթյա ժամկետ, որից հետո, խախտումը չվերացվելու դեպքում, հայցվորն իրավունք է ստանում անհապաղ հայց հարուցել իրավասու դատարան կամ վարչական մարմին,

15) քանի որ նպատակահարմար է, որ Հանձնաժողովը զեկուցի սույն Հրահանգի գործողության և, մասնավորապես, դրա գործողության ոլորտի ու նախնական խորհրդատվության իրականացման վերաբերյալ,

16) քանի որ սույն Հրահանգի կիրառումը չպետք է հակասի Համայնքի տնտեսական մրցակցության նորմերի կիրառմանը,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգի նպատակն է՝ ներքին շուկայի անխափան գործունեությունն ապահովելու նպատակով համապատասխանեցնել անդամ պետությունների այն օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը, որոնք առնչվում են 2-րդ հոդվածում նշված՝ իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխելու վերաբերյալ հայցերին, որոնց նպատակն է պաշտպանել սպառողների՝ հավելվածում թվարկված

հրահանգներում ներառված կոլեկտիվ շահերը:

2. Սույն Հրահանգի նպատակով, խախտում նշանակում է 1-ին պարբերությունում նշված՝ կոլեկտիվ շահերը ոտնահարող ցանկացած գործողություն, որը հակասում է հավելվածում թվարկված հրահանգներին՝ ինչպես դրանք փոխատեղվել են անդամ պետությունների ներքին իրավակարգ:

Հոդված 2

Իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխելու վերաբերյալ հայցերի հարուցումը

1. Անդամ պետությունները նշանակում են այն դատարանները կամ վարչական մարմինները, որոնք իրավասու են որոշում կայացնելու 3-րդ հոդվածի իմաստով իրավասու մարմինների կողմից հարուցած հայցերով, որոնք պահանջում են՝

ա) ճիշտ ժամանակին կայացված որոշում՝ ցանկացած խախտում դադարեցնելու կամ արգելելու մասին, անհրաժեշտության դեպքում՝ արագացված դատավարությամբ.

բ) անհրաժեշտության դեպքում այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ որոշման՝ պատշաճ կերպով ամբողջական կամ մասնակի հրապարակումը և (կամ) ուղղում կատարելու մասին հայտարարության հրապարակումը՝ իրավունքի խախտման շարունակական ազդեցությունը վերացնելու նպատակով.

գ) այնքանով, որքանով տվյալ անդամ պետության իրավական համակարգը թույլ է տալիս, որոշումների կատարումն ապահովելու նպատակով որոշում կայացնել պարտված պատասխանողի դեմ՝ դատարանի կամ վարչական մարմնի կողմից սահմանված ժամկետներում որոշումը չկատարելու դեպքում յուրաքանչյուր օրվա ուշացման համար ամրագրված գումար, կամ ներպետական օրենսդրությամբ նախատեսված ցանկացած այլ գումար վճարելու պետական բյուջե, կամ ներպետական օրենսդրությամբ, կամ դրա համաձայն նախատեսված այլ ցանկացած շահառուի:

2. Կիրառվող իրավունքի առումով սույն Հրահանգը չի հակասում միջազգային մասնավոր իրավունքի նորմերին՝ այսպիսով հանգեցնելով կամ այն անդամ պետության իրավունքի կիրառմանը, որտեղ տեղի է ունեցել խախտումը, կամ այն անդամ պետության իրավունքի կիրառմանը, որտեղ առաջ են եկել խախտման հետևանքները:

Հոդված 3

Շայց հարուցելու իրավասություն ունեցող կառույցները

Սույն Հրահանգի իմաստով, «իրավասու կառույց» է համարվում ցանկացած մարմին կամ կազմակերպություն, որը, անդամ պետության իրավունքի համաձայն պատշաճ

կերպով կազմավորված լինելով, օրինական շահ է հետապնդում 1-ին հոդվածում նշված դրույթների կատարումն ապահովելու հարցում, մասնավորապես՝

ա) 1-ին հոդվածում նշված շահերի պաշտպանության համար հատկապես պատասխանատու մեկ կամ ավելի անկախ պետական մարմիններ այն անդամ պետություններում, որտեղ նման մարմիններ գոյություն ունեն և (կամ)

բ) կազմակերպություններ, որոնց նպատակն է, իրենց ներպետական իրավունքով սահմանված չափանիշների համաձայն, պաշտպանել 1-ին հոդվածում նշված շահերը:

2. Անդամ պետությունների կողմից ընդունված՝ նախնական խորհրդատվությունը կարգավորող նորմերը ներկայացվում են Հանձնաժողովին և հրապարակվում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում*:

Հոդված 4

Ներհամայնքային խախտումները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ տվյալ անդամ պետությունում կատարված խախտման դեպքում ցանկացած իրավասու կառույց մեկ այլ անդամ պետությունից, որտեղ տվյալ իրավասու կառույցի կողմից պաշտպանվող շահերը ոտնահարվել են այդ խախտմամբ, կարող է դիմել 2-րդ հոդվածում նշված դատարան կամ վարչական մարմին՝ ներկայացնելով 3-րդ պարբերությամբ սահմանված ցանկը: Դատարանները կամ վարչական մարմիններն ընդունում են այդ ցանկը որպես իրավասու կառույցի իրավունակության ապացույց, առանց սահմանափակելու նրանց իրավունքը՝ ստուգելու թե արդյո՞ք իրավասու կառույցի նպատակն արդարացնում է տվյալ դեպքում այդ մարմնի կողմից հայցի հարուցումը:

2. Ներհամայնքային խախտումների առումով և չսահմանափակելով ներպետական օրենսդրությամբ այլ կառույցներին վերապահված իրավունքները, անդամ պետություններն իրենց իրավասու կառույցների պահանջով հայտնում են Հանձնաժողովին, որ տվյալ կառույցները, 2-րդ հոդվածի համաձայն, հայց հարուցելու իրավասություն ունեն: Անդամ պետությունները Հանձնաժողովին են փոխանցում իրավասու կառույցների անվանումն ու նպատակը:

3. Հանձնաժողովը կազմում է իրավասու կառույցների՝ 2-րդ պարբերությունում նշված ցանկը՝ նշելով դրանց նպատակը: Այդ ցուցակը հրապարակվում է *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում*. ցանկում կատարված փոփոխությունները հրապարակվում են անհապաղ, իսկ թարմացված ցանկը հրապարակվում է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ:

Հոդված 5

Նախնական խորհրդատվությունը

1. Անդամ պետությունները կարող են ներմուծել կամ պահպանել դրույթներ, որոնց միջոցով այն կողմը, որ ցանկանում է իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխելու վերաբերյալ հայց հարուցել, կարող է դա անել միայն այն բանից հետո, երբ փորձի վերացնել խախտումը՝ հոդված 3«ա»-ի իմաստով խորհրդակցելով կամ պատասխանողի, կամ էլ ն՝ պատասխանողի, ն՝ այն անդամ պետության իրավասու կառույցի հետ, որտեղ պետք է հարուցվի հայցը: Իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխելու վերաբերյալ հայց հարուցել ցանկացող կողմի՝ իրավասու կառույցի հետ խորհրդակցելու անհրաժեշտության հարցը որոշում է անդամ պետությունը: Եթե խախտումը չի վերացվում խորհրդակցության դիմումը ստանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում, տվյալ կողմը կարող է հայց հարուցել անհապաղ:

2. Հանձնաժողովին տեղեկացնում են անդամ պետությունների ընդունած՝ նախնական խորհրդատվությունը կարգավորող նորմերի մասին, որոնք հրապարակվում են *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում*:

Հոդված 6

Ձեկույցները

1. Յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ, իսկ առաջին անգամ՝ ոչ ուշ, քան սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո, Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին և Խորհրդին զեկույց է ներկայացնում սույն Հրահանգի կիրարկման վերաբերյալ:

2. Իր առաջին զեկույցում Հանձնաժողովը, մասնավորապես, ուսումնասիրում է՝

– սույն Հրահանգի գործողության ոլորտը առևտրային, արդյունաբերական, արհեստագործական կամ մասնագիտական գործունեությամբ զբաղվող անձանց կոլեկտիվ շահերի պաշտպանության առնչությամբ.

– սույն Հրահանգի՝ հավելվածում թվարկված հրահանգներով սահմանված գործողության ոլորտը.

– արդյո՞ք 5–րդ հոդվածով սահմանված նախնական խորհրդատվությունը նպաստել է սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը:

Անհրաժեշտության դեպքում զեկույցին կցվում են սույն Հրահանգում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ:

Հոդված 7

Գործողությունների ավելի լայն շրջանակ սահմանող դրույթները

Սույն Հրահանգը չի խոչընդոտում անդամ պետություններին՝ ընդունել կամ պահպանել իրավասու կառույցներին և ցանկացած այլ անձանց ներպետական մակարդակով հայց հարուցելու ավելի լայն իրավունքներ վերապահող դրույթներ:

Հոդված 8

Կիրարկումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը ոչ ուշ, քան Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո 30 ամսվա ընթացքում: Նրանք անհապաղ այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու ձևերը հաստատում են անդամ պետությունները:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ներպետական իրավունքի դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց 20 օր հետո:

Հոդված 10

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1998 թվականի մայիսի 19-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Խ. Մ. ԽԻԼ–ՌՈՒԼԵՍ

Խորհրդի կողմից՝

Նախագահ Գ. ԲՐԱՌԻՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

1-ԻՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ՑԱՆԿԸ (*)

1. «Մոլորեցնող գովազդի մասին անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին» Խորհրդի 1984 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 84/450/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 250, 19.09. 1984թ., էջ 17):
2. «Ձեռնարկության շենքից դուրս բանակցված պայմանագրերի առումով սպառողների պաշտպանության մասին» Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 85/577/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 372, 31.12.1985թ., էջ 31):
3. «Սպառողական վարկի մասին անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին» Խորհրդի 1986 թվականի դեկտեմբերի 22-ի՝ վերջին անգամ 98/7/ԵՀ հրահանգով փոփոխված թիվ 87/102/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 101, 1.04. 1998թ., էջ 17):
4. «Հեռուստահեռարձակման իրականացման վերաբերյալ անդամ պետությունների օրենքով, կանոնակարգով կամ վարչարարությամբ սահմանված որոշակի դրույթների համապատասխանեցման մասին» Խորհրդի 1989 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 89/552/ԵՏՀ հրահանգ: 10-21-րդ հոդվածներ (ՊՏ L 298, 17.10.1989թ., էջ 23՝ փոփոխված 97/36/ԵՀ հրահանգով (ՊՏ L 202, 30.07.1997թ., էջ 60)):
5. «Ճամփորդությունների (ուղևորության, հյուրանոցի, սննդի, զվարճությունների և այլ ծախսեր ներառող) փաթեթի մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 13-ի թիվ 90/314/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 158, 23.06.1990թ., էջ 59):
6. «Մարդկանց կողմից օգտագործման համար նախատեսված դեղորայքային արտադրանքի գովազդի մասին» Խորհրդի 1992 թվականի մարտի 31-ի թիվ 92/28/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 113, 30.04.1992թ., էջ 13):
7. «Սպառողական պայմանագրերի անարդար պայմանների մասին» Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5-ի թիվ 93/13/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 95, 21.04.1993թ., էջ 29):
8. «Անշարժ գույքի տարածակետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի (timeshare) ձեռքբերման պայմանագրերի որոշակի ասպեկտների հետ կապված գնորդների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 1994 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 94/47/ԵՀ հրահանգ (ՊՏ L 280, 29.10.1994թ., էջ 83):
9. «Հեռահար պայմանագրերի առումով սպառողների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1997 թվականի մայիսի 20-ի

(*) թիվ 1, 6, 7 և 9 հրահանգները հատուկ դրույթներ են պարունակում իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելու վերաբերյալ հայցերի մասին:

թիվ 97/7/ԵՀ հրահանգ (ՊՏ L 44, 4.06.1997թ., էջ 19):